

Հանճարեղ մարդուկ մըն է, որ քարքարուտ տեղ մը ծնած ըլլալուն երբեք թաց տեղ չի պառկիր: Իր քալելը ու գաղթելը գրեթէ միաժամանակ տեղի կ'ունենան: Գաղթելէն վերջն ալ անպայման կը թառի արծաթ ճիւղի մը վրայ՝ բեռնաւոր ոսկի պտուղներով:

Ակնցիին կծծիութիւնը առածի կարգ անցած է: Պոլսեցիի մը կողմէ գրուած եւ անտիպ մնացած՝ հին ազգաց պատմութեան գրքի մը մէջ կը պատահիմ հետեւեալ նախադասութեան.

«Ակնցին այնքան քաջ կծծի մը եղած է, որ անոր ձեռքէն դրամ առնողներն են միայն, որ կրցած են դասուիլ դիւցազանց կարգը եւ կապել յաղթութեան դափնեպսակ ու անմահութեան լուսապսակ: Յաճախ հսկայազօր բանակներ տարիներով պաշարած են Ակնցիի Ոսկեբերդը ու յետոյ ջախջախուած ամօթալի պարտութեամբ»:

Ամիրտովլաթի մէկ անտիպ երկասիրութեան մէջ կը հանդիպինք հետեւեալ պարբերութեան՝ ուղղուած դայեակներուն.

«Եթէ Ակնցի յդի կնոջմէ մը դժուար ըլլայ մանուկը առնել, պէտք է դիմել հետեւեալ հնարքին. լեցնել ափը արծաթ դրամներով եւ փողերը խաղցնել. մանուկը ինքնաբերաբար աշխարհ կուգայ: Իսկ երբ կ'ուզուի Ակնցի մանուկը շուտ ոտքի հանել, պէտք է, արծաթ դրամ մը ցոյց տալով, հեռանալ: Ակնցի նորածինը ոչ միայն պիտի վազէ, այլ նոյնիսկ թախլա պիտի նետէ ի տես արծաթին:

Ակնցին կը մեծնայ՝ միշտ ստամոքսի խիթ ունենալով: Անոր համար է, որ իր դրամը չուտեր, սակայն, եթէ պնակ մը դրամ դնէք իր առջեւը, չի կոտորեր ձեզ, ու, բարեկամի դրամ է ըսելով, փառաւորապէս կ'ուտէ, այնքան հաճոյակատար է:

Ակնցին հպարտ է իր ազնուութեամբ, ազնուականութեամբ, իր հակոտնեայ տաղանդներով, մանաւանդ՝ իր Ակնցի ըլլալով, սակայն երբեք հպարտ չէ իր դրամով:

Չուրանար դրամը, սակայն ուրանալով կ'ուրանայ ի՛ր ունեցած դրամը:

Իբրեւ սեղանաւոր՝ վիուկ է եղած: Սուլթանները, վեզիրները եւ անոնց նմանները վերածած է տասնոցներու:

Բոլոր դրամներուն հայրենիքը Ակնցիին գրպանն է: Անոր համար է, որ աշխարհի ամեն տեսակ դրամները կը տառապին: Այդ դրամ-